Հաստատում եմ՝ դպրոցի տնօրենի ժ/պ
Տիգին Ա. Հակոբյան
31.08.2022թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան համար 8 միջն. դպրոցի <<Ֆիզկուլտուրա, ՆԶՊ, Տեխնոլոգիա, Շախմատ >> առարկայական մեթոդական միավորման 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան ծրագիր

<<Ֆիզկուլտուրա, ՆԶՊ, Տեխնոլոգիա, Շախմատ >>
առարկայական մեթոդական միավորման
2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական
աշխատանքների տարեկան պլան ծրագիր

Պլան ծրագրի նպատակը՝

- կատարել առարկայական մ/մ աշխատանքների վերլուծություն
- գնահատել մ/մ աշխատանքների արդյունավետությունը
- կարևորել մ/մ գործունեությունը

2022-2023 ուս.տարվա մեթոդմիավորումը ձևավորվել է ֆիզկուլտուրա, ՆԶՊ, տեխնոլոգիա և շախմատ առարկաներ դասավանդող ուսուցիչների միավորմամբ:

№	ՈՒՍՈՒՑԻՉ	ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ	ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆ
1.	Ղուրշուդյան Երվանդ	Բարձրագույն	Ֆիզկուլտուրա
2.	Ղարիբյան Լիաննա	Բարձրագույն	Ֆիզկուլտուրա
3.	Սաֆարյան Նարինե	Բարձրագույն	Ֆիզկուլտուրա
4.	Հակոբյան Գայանե	Բարձրագույն	Ֆիզկուլտուրա
5.	Արզումանյան Հակոբ	Բարձրագույն	Ն.Զ.Պ
6.	Գևորգյան Լեյլի	Միջին մասնագիտական	Տեկնոլոգիա (աղջիկների խումբ)
7.	Խաչատրյան Սուսաննա	Բարձրագույն	Տեկնոլոգիա (տղաների խումբ)
8.	Սարգսյան Կարո	Բարձրագույն	Շախմատ

Մ/մ անդամների ուսումնական ծանրաբեռնվածությունը 2022-2023 ուս. տարում

№	ՈՒՍՈՒՑԻՉ	ԴԱՍԱԺԱՄ	ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
1.	Ղուրշուդյան Երվանդ	23	V-XII
2.	Սաֆարյան Նարինե	2	I
3.	Ղարիբյան Լիանա	2	II
4	Հակոբյան Գայանե	2	III
5.	Խաչատրյան Սուսաննա	2	IV
6.	Արզումանյան Հակոբ	5	VIII-XII
7.	Գևորգյան Լեյլի	4	V-VI VII
8.	Խաչատրյան Սուսաննա	10	I-II-VII III-IV-V-VI
9.	Սարգսյան Կարո	6	II-III-IV
	Միջին ծանրաբեռնվածություն	18	

Մ/մ կողմից դրված նպատակներ և խնդիրներ

- *Ստեղծել պայմաններ կրթության որակի բարձրացման ուղղությամբ:*
- *Կատարել կրթամեթոդական և գործնական աշխատանքների արդյունքների վերլու-*
  ծություն հիմնական և միջնակարգ դպրոցում:
- *ՏՀՏ-ի կիրառումը I- XII դաս.-ում դարձնել կրթության բովանդակության բարելավման ուղի:*
- *Առաջավոր փորձի ձեռքբերում, մեթոդական մշակումների և մանկավարժական ընթերցումների կազմակերպում:*
- *Գնահատումը իրականացնել 2022-2023 ուս.տարվա ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ մեթոդական ցուցումների համաձայն:*

- Իրականացնել մ/մ կողմից ներդպրոցական վերահսկողություն և մշտադիտարկում՝ որպես գործիք կիրառելով կրթական համալիր հետազոտությունը թեստերի միջոցով:
- Կազմակերպել աշխատանք մանկավարժական կադրերի հետ՝ նպաստելով նրանց որակավորման բարձրացմանը:
- Նորմատիվ փաստաթղթերի վարման տիրապետում մանկավարժների կողմից, մեթոդական և տեղեկատվական փաստաթղթերի ուսումնասիրություն:
- Ապահովել կրթական մակարդակների սահուն անցումը:

Մ/մ-ի առջև դրված վերոնշյալ խնդիրները սերտորեն կապված էին նախորդ ուս. տարվա խնդիրների հետ:

Մ/մ ուսումնադաստիարակչական աշխատանքները 2022-2023ուս.տարվա ընթացքում տարվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

- միջնակարգ պարտադիր կրթության իրականացում
- մ/մ առարկաների չափորոշչահեն ուսուցում
- մ/մ անդամների մասնագիտական և մեթոդական հմտությունների ապահովում
- ուսումնանյութական բազայի հարստացում
- աշխատանք օժտված երեխաների հետ
- արտաուսումնական աշխատանքային գործունեություն

Մ/մ կադրերի հետ աշխատանքների նախընտրելի ձևերը

Ուսումնական տարվա ընթացքում մ/մ-ը կիրառելու է տարբեր աշխատաոճեր. մանկավարժական ընթերցումներ, զեկույցներ, թեմատիկ քննարկումներ, մշտադիտարկում: Մ/մ անդամները համատեղ ուժերով և SS համակարգերով մշակել են կրթական նյութեր, համակարգչային կաբինետում անցկացնելու են բազմարովանդակ դասեր,տարել մանկավարժամեթոդական աշխատանք և պարբերաբար զեկուցումներով հանդես գալ մ/մ նիստերում:

Մ/մ հետազոտական աշխատանքների բնույթը

1) Ինովացիոն /նորարարական/

Մ/մ ուսուցիչները ուսումնասիրություն են կատարել ուսուցման աստիճանական անցման համապատասխանությունը ուսումնական ծրագրերի և չափորոշիչների հետ, կատարվել են դասագրքերի էլեկտրոնային տարբերակների քննարկումներ: Դասագրքերի քննարկումները թույլ են տալիս ուսուցիչներին կողմնորոշվելու ուսումնական դասագրքերի, այլընտրանքային ձևերի ընտրության հարցում և ձեռք բերելու պետական ծրագրային պահանջներին և կրթության բովանդակային բաղադրիչներին համապատասխանող դասագրքեր:

Ներդպրոցական վերահսկողությունը մ/մ կողմից

Վերահսկողության ձև	ԴԱՍԱՐԱՆՆԵՐ				
	1-րդ	2-4-րդ	5-7-րդ	8-9-րդ	10-12-րդ
Խորհրդակցություններ	+	+	+	+	+

դիտնօրենի հետ					
Փողադարձ դասալսումներ	+	+	+	+	+
Դասալսումներ մ/մ մախագահի կողմից	+	+	+	+	+
Ծրագրային կատարողականների ստուգում	+	+	+	+	+
Թեմատիկ,կիսամյակային գրավոր աշխատանք ների գնահատականների համապատասխանութ յան ստուգումներ դասամատյաններում	-	+	-	-	-
Գնահատականների համապատասխանության ստուգումներ էլեկտրոնային մատյաններում	+	+	+	+	+
Դասալսումներ տնօրենության կողմից	+	+	+	+	+

Մ/մ ուսումնակրթական միջավայրը դպրոցում և մ/մ ուսուցիչների փոխհարաբերությունը մ/մ աշխատանքներում

Դպրոցում գործում է մ/մ անկյուն, որտեղ առկա է մեթոդական գրականություն, մշակված դասեր համակարգչային կաբինետում սլայդներով, որոնցից պարբերաբար օգտվում են ուսուցիչները: Առկա են նաև թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների օրինակելի նմուշներ:Մ/մ բոլոր խնդիրները լուծվում են գործնական ջերմ մթնոլորտում, ապահոված է տեղեկատվական դաշտը, մեթոդական աջակցությունը:

Խնդիրներ, որոնց շուրջ հարկ է աշխատել նոր ուսումնական տարում

- ՏՀՏ փորձի փոխանակում
- Ուսուցիչների ինքնակրթության բարձրացում
- Գիտելիքների ստուգումների մեթոդաբանական վերանայում
- Ուսուցիչների տարակարգի բարձրացում
- Թարմացնել և համալրել տվյալների բազան

Առաջարկություններ մ/մ ուսուցիչների կողմից.

- *Մ/մ նիստերը դարձնել առավել խորհրդատվական*
- *Ուսուցման նոր մեթոդները կարևորել որպես կրթական գործընթացի կարևոր բաղադրիչ և ուսուցչի անհատական մոտեցման գործունեության ձև*
- *Տանել աշակերտակենտրոն ուսուցում, մշտապես կիրառել ՏՀՏ համակարգեր և այն ինտեգրել ուսուցման գործընթացում:*